Ս.ՇՏԻԿՅԱՆ

Ա. ՇԱՐՈՒՐՅԱՆ «ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ»

Եթե արտահայտվելու լինենք ընդհանուր ձևով, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Պետրոս Դուրյանը մեր գրականության այն դասականներից է, որի մասին, բացարձակ իմաստով, ամենից շատն է գրվել։ Սկսած 1872 թվականից, երբ առաջին անգամ ընթերցող և գիտական հասարակայնության սեղանին դրվեց վաղամեռիկ բանաստեղծի չափածո և արձակ ստեղծագործությունների առաջին, համեմատաբար ամբողջական ժողովածուն, ընդհուպ մինչև մեր ժամանակները, Դուրյանի կյանքն ու ստեղծագործությունը անընդմեջ քննության, ուսումնասիրության և վերլուծության առարկա են եղել։ Եվ, որ պակաս կարևոր չէ, այդ գործին իրենց որոշակի մասնակցությունն են բերել մեր գրական-մշակութային կյանքի այնպիսի մեծերը, ինչպիսիք են Բ. Էքսերճյանը, Եր. Օտյանը, Ա. Չոպանյանը, Լ. Բաշալյանը, Հր. Ասատուրը, Հր. Աճառյանը, Մինաս Չերազը, Մ. Ճանաշյանը, Հ. Օշականը, Հր. Նազարյանը, Հ. Ղանալանյանը, Վ. Թերզիբաշյանը, Գ. Ստեփանյանը և շատ ուրիշներ։ Դուրյանի մասին ավել կամ պակաս ծավալուն խոսքով հանդես են եկել ռուս և եվրոպացի քննադատներից՝ Յու. Վեսելովսկին, Վ. Բրյուսովը, Զ.Պ. Լուչինին, Ֆ.Ն. Վալենտինին, Ա. Վիոլանտեն և այլն, չհաշված հայկական, ռուսական և եվրոպական պարբերականներում հրատարակված թերթային հոդվածները, որոնք բազում-բազմաթիվ են։ Ծագում է բնականոն մի հարց. այս բոլորից հետո, հանդես գալով «Պետրոս Դուրյան» ընդարձակ (360 էջ) մենագրությամբ (Երևան, 1972), ի՞նչ նոր խոսք ունի ասելու գրականագետ Ալ. Շարուրյանը։ Ռոմանտիկ անխոհեմության, և ինչ-որ չափով գրականագիտական երիտասարդության արդյունք չէ՞ արդյոք նորից անդրադառնալը մեր դասական գրականության այն ներկայացուցչին, որի մասին եղած քննադատական գրականությունը հարյուրավոր անունների է հասնում։

Հարցին ըստ ամենայնի պատասխանելու համար պետք է մտաբերենք, որ առաջին անգամ Ալ. Շարուրյանին Դուրյանի կապակցությամբ հանդիպում ենք դեռ 1965 թվականին, երբ նա «Գրական թերթում» հանդես եկավ վերջինիս գրական ժառանգության հետ առնչվող մի քանի հարցերի քննությամբ։ Հոդվածն ուշադրություն գրավեց այն պատճառով, որ հեղինակը մի կողմ էր թողել մեր դասականի ուսումնասիրության լայնորեն տարածված եղանակը, այսինքն՝ գործերի գրականագիտական վերլուծությունը, բանաստեղծական պատկերների ու համեմատությունների քննությունը, պոեզիայի արվեստի հարցերը, կամ լեզվա-մտածողական համակարգի առանձնահատկությունները և այլն, և անդրադարձել էր նրա գրական

ժառանգությանը՝ բանասիրական ճշգրտումներ անելու տեսակետից։ Առաջին հայացքից «փոքր» թվացող մոտեցում էր սա, բայց Շարուրյանի պրպտումները ցույց տվեցին, որ հենց այդ «փոքր» հարցերի տեսանկյունից Դուրյանի գրական-գեղարվեստական ժառանգությունը առ այսօր դեռ ինչպես հարկն է քննության չի արժանացել, և մեր դասականի գործերի քննությունը այդ կտրվածքով՝ ուշագրավ մանրամասներ է բացահայտում։ Հետագայում, մեր հանրապետության այլևայլ թերթերում ու ամսագրերում հրատարակված նրա հոդվածները եկան հաստատուն կերպով ապացուցելու, որ Ալ. Շարուրյանը վստահորեն գնում է իր իսկ նախընտրած դժվարաշատ, աշխատատար, բայց գործին անվերապահորեն օգուտ բերող ճանապարհով։ Տող առ տող, բառ առ բառ կատարվող տեքստաբանական քննությունների հետևանքով, օրինակ, հնարավոր եղավ վերականգնել Դուրյանի՝ մեկից ավելի բանաստեղծությունների «իսկական», այսինքն՝ հեղինակի գրչի տակից դուրս եկած սկզբնական ձևերը. բանաստեղծություններ, որոնք «էլ ավելի լավացնելու», ավելի «գեղեցկացնելու» դյուրագայթ միտումից ելնելով, նախանձելի «հոգատարությամբ» արել էին Դուրյանի՝ մանավանդ առաջին ժողովածվի հրատարակիչները, գրեթե անճանաչելիության չափ փոփոխելով մեր դասականի չափածո գործերը։ Հնարավոր եղավ ճշտել Դուրյանի գրչին պատկանող մեկից ավելի թատերագիտական, գրականագիտական և հրապարակախոսական հոդվածները, որոնք անստորագիր լինելու հետևանքով, առ այսօր վրիպել էին բանասերների ուշադրությունից. հասկանալի է, որ լրացավ և է՛լ ավելի ամբողջացավ բանաստեղծի գրական ժառանգությունը։ Ինքնատիպ է կատարված, վերջապես, մեր դասականի նամականու քննության հարցը։ Դուրյանը արևմտահայ մեր գրական-մշակութային գործիչներից շատերի նման հետաքրքիր մի սովորություն է ունեցել. տվյալ անձնավորությանը գրած իր նամակում ակնարկել նրան առաքված իր նախորդ նամակի կամ նամակների մասին, երբեմն վկայակոչել իր նախորդ նամակի այս կամ այն միտքը, կամ նույնիսկ, ուղղակի մեջբերում արել նրանից, դիմելով իր նամակագրին՝ թվել, թե ինքը քանի հատ պատասխան-նամակ է գրել և այլն։ Այստեղից էլ սկսել է Ալ. Շարուրյանը, «բռնելով» այդ կարգի արտահայտություններից – ջանադիր կերպով քննելով դրանք, նա կարողացել է բացահայտել, թե նամակներից ինչն է հասել մեզ և ինչը՝ ոչ (ի դեպ, պակասող նամակներն էլ զգալի քանակություն են կազմում), վերականգնել է նրանցում առկա անճշտություններն ու կրճատումները, որոնք, նախորդ դեպքի նման, բավականին առատությամբ արել էին Դուրյանի գործերի հրատարակիչները և այլն։

Սա հարցի մի մասն էր և, եթե կարելի է այսպես ասել, գիտա-բանասիրական մասը։ Կար հարցի մյուս և, թերևս, ավելի կարևոր կողմը։ Պետրոս Դուրյանի արխիվը, ինչպես հայտնի է, Հայաստանում չէ, և հետևաբար, այն առայժմ անհասանելի է մնում սովետահայ գիտնականների

համար։ Բնականաբար, գրականագետին մտահոգող հարցերից մեկն էլ պետք է լիներ ըստ ամենայնի ծանոթանալը այդ արխիվի բովանդակությանը, այնտեղ եղած նյութերի՝ եթե չասենք ամբողջ, համենայն դեպս կարևոր մասի ուսումնասիրությունը, իր բանասիրական եզրահանգումների ու բնագրագիտական բնույթի ճշգրտումների՝ այդ արխիվի մատակարարած տվյալների միջոցով հավաստելու ու լրացնելու հրամայական անհրաժեշտությունը։ Եվ եթե ավելացնենք, որ Պետրոս Դուրյանի արխիվը իր եղբոր՝ ականավոր հոգևորական և մշակութային գործիչ, բանասեր Եղիշե Դուրյանի «գրությունների» հետ բազում թափառումներից հետո, ի վերջո, հանգրվանեց Երուսաղեմում, իսկ նրա հետ կապված արխիվային նյութերի «ծայրերը» դուրս էին գալիս աշխարհի ամենատարբեր հայկական կենտրոններից, և եթե մտաբերենք, որ Դուրյանը որպես ստեղծագործող սկսվել ու ավարտվել է Պոլսում, որտեղ դարձյալ նրա հետ կապված փաստանյութը կարող էր բազում-բազմաթիվ լինել, ապա հասկանալի կդառնա, թե ինչու Ալ. Շարուրյանի համար ամենևին էր երկրորդական նշանակություն չէին կարող ունենալ այդ բնույթի «արտասահմանյան» նյութերը։ Եվ ներքին զոհունակությամբ պետք է արձանագրենք, որ հայ գրականության ու մշակույթի սփյուռքահայ մեր բարեկամները արել են հնարավորն ու կարելին, օգնության ձեռք մեկնելու համար գրականագետին։ Մենք էլ, Շարուրյանի հետ, կրկնենք նրա ջերմ շնորհակալությունը Երուսաղեմի Ս. Հակոբյան վանքի միաբանությանը, Վիեննայի Մխիթարյաններին, Փարիզի Նուպարյան մատենադարանի տնօրինությանը և ուրիշ-ուրիշներին, առանց որոնց անշահախնդիր օգնության, աշխատության մեջ շատ բաներ չէին լինի այնպես հաջողված ու ամբողջական, ինչպես որ եղել են։

Նման հարցադրումներ կարելի է մի քանիսն էլ թվարկել, բայց ասվածն էլ բավարար համոզչականությամբ ցույց է տալիս, որ Ալ. Շարուրյանի «Պետրոս Դուրյան» մենագրությունը ծնվել է դուրյանագիտության բնագավառում նրա իսկ կատարած՝ տարիների քրտնաջան աշխատանքից հետո միայն, ծնվել է իր բոլոր մեծ ու փոքր նախորդների կատարած մեծ գործը քննադատաբար ու վերլուծաբար յուրացնելուց հետո, և այս առումով հանդիսանում է գրականագետի կատարած աշխատանքի ամփոփումն ու հանրագումարային արդյունքը։ Այս էլ հենց ուսումնասիրության հաջողության առհավատչյաներից մեկն է, և թերևս, ամենակարևորը։ Մյուսները (շարադրանքի հստակություն, վերլուծությունների մասնագիտական հմտություն ու խորություն, Դուրյանի ապրած ժամանակաշրջանի գրական-հասարակական կյանքի քաջագիտակություն, նրա՝ իբրև բանաստեղծի ու դրամատուրգի, տեղի ու կատարած դերի ճիշտ բացահայտում և այլն) գալիս են լրացնելու և ամբողջացնելու այս ամենակարևոր հաջողությունը,

իսկ բոլորը միասին առավել քան պարզորոշությամբ հավաստում են, որ Ալբերտ Շարուրյանի «Պետրոս Դուրյան» մենագրությունը հաջողությամբ բռնել է պահանջվող քննությունը։

Անդրադառնանք նաև մեկ այլ, առաջին հայացքից դարձյալ «ոչ գիտական» խնդրի, որին սակայն, գրականագետը իր մենագրության մեջ նպատակահարմար է գտել մեկից ավելի էջեր հատկացնել։ Խոսքը վերաբերում է Պետրոս Դուրյանի՝ մեզ հասած միակ նկարի հեղինակի ով լինելու հետ կապված հարցի բանասիրական քննության պատմությանը.մի պատմություն, որը հիմնականում սկսվում է հենց իրենից՝ Ալբերտ Շարուրյանից։ Ինչպես հայտնի է, Դուրյանի նկարի հեղինակը, հակառակ ժամանակին արված մեկ-երկու հարց ու պրպտուքին, մնացել էր անհայտ առ այսօր և խնդիրը սահմանափակվում էր սոսկ ավել կամ պակաս հավանականություն ունեցող թեկնածուներով։ Եվ Շարուրյանի մանրակրկիտ պրպտումներին ենք պարտական այս հարցի վերջնական պատասխանն իմանալու համար, այն է՝ Պետրոս Դուրյանի նկարի հեղինակներն են Մերուժան Պարսամյանը և Տիրան Չրաքյանը, հանրաճանաչ բանաստեղծ «Ինտրան». մի եզրակացություն, որը որքան որ անսպասելի է, նույնքան էլ հավանական։

Շարուրյանի ուսումնասիրությունը շարադրված է այս ժանրի գործերի համար կանոնիկ դարձած ձևով, որը, այս դեպքում ևս, հաջողությամբ արդարացնում է իրեն։ Ներածության մեջ տրվում է շուրջ հարյուր տարվա դուրյանագիտության վերլուծական պատմությունը, ապա շարադրվում է հեղինակի գիտա-բանասիրական կենսագրությունը, իհարկե դիտված իր ժամանակաշրջանի գրական-հասարակական միջավայրում, ապա հաջորդում է Դուրյանի դրամատուրգիայի և բանասիրական գործերի վերլուծությունը։ Աշխատությունն ավատվում է հմուտ ծանոթագրություններով և Դուրյանի կյանքի ու գրական-մշակութային գործունեության համառոտ տարեգրություն-հավելվածով։ Հիշատակված բաժիններից յուրաքանչյուրը ինչ-որ չափով նախորդ դուրյանագետների արած գործի հավաստումն ու կրկնությունը լինելով հանդերձ, հարստացված է բազմաթիվ նորանոր, ուշագրավ փաստերով։

Կկամենայինք նշել նաև աշխատության մի առանձնահատկությունը ևս։ Իր ասելիքը շարադրելիս, անելով բազում-բազմապիսի լրացումներ, ճշգրտումներ, մութ հատվածների պարզաբանումներ, հեղինակը, սակայն, բոլոր անհրաժեշտ դեպքերում նշում է, թե ինչ է պակասում Դուրյանից, հականե-հանվանե հիշատակում է, թե նրա որ գործերն են, որոնք առ այսօր դուրս են մնացել դուրյանագետների ուշադրությունից, որ ստեղծագործություններն են, որոնց գոյությունը վիճարկման ենթակա չէ, բայց ինչ-ինչ պատճառներով դեռ չկան ձեռքի տակ և

այլն։ Այս տեսանկյունից մոտենալով՝ Ալ. Շարուրյանի «Պետրոս Դուրյան» մենագրությունը գիտակ ուղեցույց կարող է լինել Դուրյանի գրական ժառանգության պակասող օղակները փնտրող ինչպես մեր, այնպես էլ սփյուռքահայ մշակութային գործիչների համար և մի տեսակ ազնիվ խթան՝ այդ պարտավորեցնող գործով էլ ավելի սիրով ու ջանասիրությամբ զբաղվելու համար։

Ալ. Շարուրյանի «Պետրոս Դուրյան» մենագրությունը ուշագրավ աշխատություն է նվիրված «Հայ նոր քնարերգության հիմնադրին ու առաջին դասականին» (Պ. Սևակ) և իր մեկ-երկու թերություններով հանդերձ, մի նոր, համեստ աստիճան հայ դուրյանագիտության բնագավառում։

Հայրենիքի ձայն, 1973, ապրիլի 18, № 16